

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՍՏԵՑՐՈՄՍ

Հաստատված է ՀԱՊՀ Գիտական խորհրդի
2020թ. հունիսի 16-ի նիստի թիվ 08 հիշյալ կետով



Կ Ա Ր Գ

«ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԻՔ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԿԻՐԱՌՈՂ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍԱԽՈՍ»
ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՎ ԱՍԵՆԱՍՅԱ ՄՐՅՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համաձայն Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) 5-րդ Ստրատեգիական պլանով (2016-2020թթ.) ամրագրված հիմնադրույթների կրթության որակն ու արդյունավետության բարձրացումը, կրթական ծրագրերի շարունակական արդիականացման հետ համատեղ, եղել և մնում են Համալսարանի մրցունակության և նրա շրջանավարտների ծառայունակության բարձրացման երաշխիքները: Կրթության որակն ու արդյունավետությունը, մի շարք խնդիրների հետ զուգահեռ, ենթադրում են նաև դասավանդման և ուսումնառության կազմակերպման, գիտելիքների գնահատման տեխնոլոգիաների անընդհատ բարելավում, ինչն անհնար է առանց դասավանդման արդի պահանջների և ձևերի կիրառման մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմների ձևավորման և ներդրման:

- 1.1 Սույն **մրցանակի սահմանումը հիմնավորված է** վերոնշյալ ռազմավարական պահանջներով և լիովին համահունչ է ՀԱՊՀ 2016-2020թթ. Ստրատեգիական պլանի ՆՊԱՏԱԿ 2-ի և 5-ի, համապատասխանաբար, թիվ 2.4 և 5.1 խՆԴԻՐ-ների իրականացման ստրատեգիական հիմնական ուղղություններին:
- 1.2 Մրցանակային սույն անվանակարգի ներմուծման **հեռահար նպատակը** կրթության որակի շարունակական բարձրացումն ու միջազգային չափանիշներին մերձեցումն է՝ արդյունավետ և հաջող ուսումնառությունը նպաստող պայմանների և ծառայությունների ստեղծման ու զարգացման ճանապարհով՝ **առաջնահերթ խնդիրների** շարքում, նախատեսելով մասնավորապես՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ՀԱՊՀ Գիտական խորհրդի
2020թ. հունիսի 16-ի նիստի թիվ 68 որոշմամբ

Կ Ա Ր Գ

«ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴԻՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԿԻՐԱՌՈՂ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍԱԽՈՍ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՎ ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՅՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համաձայն Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) 5-րդ Ստրատեգիական պլանով (2016-2020թթ.) ամրագրված հիմնադրույթների՝ կրթության որակն ու արդյունավետության բարձրացումը, կրթական ծրագրերի շարունակական արդիականացման հետ համատեղ, եղել և մնում են Համալսարանի մրցունակության և նրա շրջանավարտների ծառայունակության բարձրացման երաշխիքները: Կրթության որակն ու արդյունավետությունը, մի շարք խնդիրների հետ զուգահեռ, ենթադրում են նաև դասավանդման և ուսումնառության կազմակերպման, գիտելիքների գնահատման տեխնոլոգիաների անընդհատ բարելավում, ինչն անհնար է առանց դասավանդման արդի պահանջների և ձևերի կիրառման մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմների ձևավորման և ներդրման:

- 1.1 Սույն **մրցանակի սահմանումը հիմնավորված է** վերոնշյալ ռազմավարական պահանջներով և լիովին համահունչ է ՀԱՊՀ 2016-2020թթ. Ստրատեգիական պլանի ՆՊԱՏԱԿ 2-ի և 5-ի, համապատասխանաբար, թիվ 2.4 և 5.1 ԽՆԴԻՐ-ների իրականացման ստրատեգիական հիմնական ուղղություններին:
- 1.2 Մրցանակային սույն անվանակարգի ներմուծման **հեռահար նպատակը** կրթության որակի շարունակական բարձրացումն ու միջազգային չափանիշներին մերձեցումն է՝ արդյունավետ և հաջող ուսումնառությանը նպաստող պայմանների և ծառայությունների ստեղծման ու զարգացման ճանապարհով՝ **առաջնահերթ խնդիրների** շարքում, նախատեսելով մասնավորապես՝

- ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ դասախոսների կողմից ցուցաբերվող ինովացիոն նախաձեռնությունների խթանում և խրախուսում,
- առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմների ձևավորում և ներդրում,
- ՀԱՊՀ «Շարունակական կրթության և դասախոսների վերապատրաստման կենտրոնի» դերի ու նշանակության բարձրացում՝ դասավանդման արդի մեթոդների ու ձևերի յուրացման հարցում:

- 1.3 Ամենամյա մրցանակաբաշխության գործընթացից, որպես Համալսարանում դասախոսական աշխատանքի նյութական և բարոյական խրախուսման մեխանիզմ, **հիմնական ակնկալիքը** դասախոսների ստեղծագործական և ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետության հետագա բարձրացումն է և միջազգային առաջավոր փորձի տարածումը:
- 1.4 Մույն կարգով (այսուհետ՝ Կարգ) կանոնակարգվում է ՀԱՊՀ «Դասավանդման արդի տեխնոլոգիաներ կիրառող լավագույն դասախոս» անվանակարգով ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման գործընթացը:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- 2.1 «Դասավանդման արդի տեխնոլոգիաներ կիրառող լավագույն դասախոս» անվանակարգով մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպվում և անցկացվում է տարին մեկ անգամ:
- 2.2 Մրցույթը հայտարարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով, յուրաքանչյուր տարվա հոկտեմբեր ամսվա առաջին տասնօրյակում՝ տվյալ ուսումնական տարվա համար:
- 2.3 Բացառիկ դեպքերում, պայմանավորված Կարգում լրացումների և/կամ փոփոխությունների կատարման անհրաժեշտությամբ, մրցույթի հայտարարումը կարող է հետաձգվել՝ թիվ 2.2 Կետով սահմանված ժամկետից ոչ ավել քան 1 ամսով:
- 2.4 Մրցույթի հայտարարումից հետո, նախատեսվող գործառույթների կազմակերպելու նպատակով, ձևավորվում է մրցութային հանձնաժողով (այսուհետ Հանձնաժողով)՝ տվյալ ուստարվա համար (տես Կետ 4.1; 4.2):
- 2.5 Մրցութին կարող են մասնակցել ՀԱՊՀ-ում հիմնական, համատեղությամբ կամ ժամավճարային հիմունքներով աշխատող այն դասավանդողներն, ովքեր ունեն ՀԱՊՀ-ում դասավանդման առնվազն 3 տարվա փորձ՝ ներառյալ ընթացիկ ուստարում դասավանդման պարտադիր պայմանի ապահովումը:

- 2.6 Մրցույթին չեն կարող մասնակցել նախորդ 2 ուստարիների սույն մրցանակաբաշխություններում մրցանակակիր դարձած, ինչպես նաև, տվյալ ուստարվա համար ձևավորված Հանձնաժողովի կազմում ընդգրկված անձիք:
- 2.7 Մրցութային ամբողջական գործընթացը ներառում է երկու հիմնական գործառութային բաղադրիչ՝ մրցանակակիրների ընտրություն և լավագույն փորձի տարածման նպատակով իրականացվող, մրցանակակիրների կողմից առաջարկված, առնվազն մեկական դասընթացի/մոդուլի տեսաձայնագրում:
- 2.8 Մրցույթն իրականացվում է ըստ դասընթացների մասնագիտա-բովանդակային ուղղվածության խմբերի, երկու ենթաանվանակարգերով՝ «տեխնիկական և բնագիտական ոլորտ» և «տնտեսագիտական և հումանիտար ոլորտ»՝ սույն Կարգով սահմանված մրցութային միասնական ընթացակարգերով:

3. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

- 3.1 Մրցույթի մասնակիցների առաջադրումն իրականացվում է, մրցույթի հայտարարմանը հաջորդած, թեկնածուների առաջադրման և մրցույթի անցկացման պայմանների մասին Հանձնաժողովի կողմից տեղեկատվության հայտարարման պահից (տես Կետ 4.5) սկսած՝ մեկ ամսվա ընթացքում:
- 3.2 Մրցույթի մասնակցի թեկնածությունն առաջադրվում է համապատասխան ամբիոնի կամ նրա դասավանդած ակադեմիական խմբ(եր)ի ուսանողական համակարգի կողմից՝ նիստի/ժողովի համապատասխան արձանագրության և Հանձնաժողովի մշակած միասնական ձևաչափով լրացված հայտ-հիմնավորման ներկայացմամբ:
- 3.3 Մրցույթի մասնակիցը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.
- դիմում՝ Հանձնաժողովի նախագահի անունով,
 - ինքնակենսագրություն (CV),
 - համապատասխան ամբիոնի կամ ակադեմիական խմբ(եր)ի կողմից ներկայացված պարտադիր փաստաթղթեր (տես Կետ 3.2),
 - տնօրենի/ղեկանի կամ կառուցվածքային այլ ստորաբաժանման ղեկավարի կողմից աջակցության նամակ-հիմնավորում,
 - նախորդ և ընթացիկ ուստարվա իր կողմից վարված դասընթացների ցանկ,
 - լսարանում իրականացված ինտերակտիվ ուսուցման և/կամ նորարարական մեթոդների կիրառման կոնկրետ օրինակներ (եթե առկա են),

- դասավանդ(ած)վող դասընթացների մեթոդաբանական, նորարարական, արդյունավետության և այլ որակական տարբերակիչների վերաբերյալ առանձին ուսանողների և/կամ Հանձնաժողովի անդամ չհանդիսացող գործընկերների գրավոր կարծիք-գնահատական(ներ) (եթե առկա են),
- դասընթաց(ներ)ի ընթացքում ուսանողների կողմից կատարված յուրօրինակ ինքնուրույն աշխատանքների օրինակներ (եթե առկա են):

3.4 Եթե մրցույթի մասնակիցը ներկայացրել է թերի կամ ոչ լիարժեք ձևակերպված փաստաթղթային փաթեթ, ապա Հանձնաժողովը տրամադրում է 3 աշխատանքային օր՝ թերությունները շտկելու և դիմումը կրկին ներկայացնելու համար: Նշված ժամկետում ճշգրտված փաթեթը ներկայացնելու դեպքում դիմումը համարվում է ընդունված, հակառակ պարագայում՝ դիմում-հայտը մերժվում է:

4. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ

- 4.1 Ռեկտորի կողմից Մրցույթի հայտարարումից հետո, մեկ շաբաթվա ընթացքում, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի առաջարկությամբ, ռեկտորի հրամանով ձևավորվում է տվյալ ուստարվա Հանձնաժողովի կազմը՝ (12-15) ընդ-հանուր թվաքանակով:
- 4.2 Հանձնաժողովի նախագահ, ի պաշտոնե, հանդիսանում է Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը: Անդամները հավաքագրվում են ՀԱՊՀ պրոֆեսորադասախոսական և հարցին առնչվող վարչական կազմերից՝ պարտադիր ներառելով Կետ 2.8-ում նշված մասնագիտական երկու ենթաոլորտների առաջատար փորձագետ-ներկայացուցիչների:
- 4.3 Իր գործունեությունն առավել արդյունավետ և անաչառ իրականացնելու նպատակով՝ Հանձնաժողովն իրավասու է հավակնորդների գնահատման տարբեր փուլերում, իր հայեցողությամբ, ներգրավել նաև արտաքին փորձագետներ:
- 4.4 Հանձնաժողովն իրականացնում է մրցույթի կազմակերպական բոլոր գործառույթները՝ համաձայն սույն Կարգի և իր կողմից մշակված աշխատակարգի, կրելով մրցույթի լավագույնս իրականացման հիմնական պատասխանատվությունը:
- 4.5 Հանձնաժողովն, իր ձևավորման պահից սկսած մեկ ամսվա ընթացքում, մշակում և հայտարարում է Մրցույթի անցկացման պայմանների և թեկնածուների առաջադրման մանրամասների մասին տեղեկատվությունը (տես Կետ 3.1): Նույն ժամանակահատվածում Հանձնաժողովը մշակում և ռեկտորի հաստատմանն է

ներկայացնում իր աշխատակարգը՝ ներառյալ գնահատման չափանիշներն ու համակարգը:

4.6 Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի հրավիրման միջոցով: Նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.7 Հանձնաժողովն իրավասու է, ըստ անհրաժեշտության, դասալսումներ կատարել, ինչպես նաև, ՀԱՊՀ «Որակի ներքին աուդիտի և կրթական բարեփոխումների պլանավորման» վարչությանը պատվիրել որոշ ակադեմիական խմբերում առանձին դասընթացի վերաբերյալ սոցիոլոգիական առցանց հարցումներ իրականացնել՝ իր կողմից մշակված հարցաշարով:

5. ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

5.1 Մրցույթին թույլատրված մասնակիցները նախ գնահատվում են Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից, որից հետո ձևավորվում է մասնակցի արդյունարար գնահատական՝ համաձայն Հանձնաժողովի նախապես հաստատված աշխատակարգի (տես Կետ 4.5):

5.2 Հավակնորդի գնահատման համար օգտագործվում են մասնակցության հայտով տրամադրված (տես Կետ 3.3) և Հանձնաժողովի կողմից ձեռք բերված լրացուցիչ նյութերը (կազմակերպված դասալսումներ, ուսանողների սոցիոլոգիական հարցումներ, արտաքին փորձագիտական կարծիքներ և այլն):

5.3 Հանձնաժողովում հավակնորդների գնահատումներն իրականացվում և մրցանակակիրների վերաբերյալ որոշումները կայացվում են Կետ 2.8-ով տարբերակված մասնագիտական երկու ենթաոլորտների համար առանձին-առանձին:

5.4 Մրցույթի հաղթողները որոշվում են փակ (գաղտնի) քվեարկությամբ՝ Հանձնաժողովի աշխատակարգով սահմանված կանոնների շրջանակներում: Մրցանակակիրների որոշման գործընթացը Հանձնաժողովն ավարտում է մինչև ընթացիկ ուստարվա հունիսի վերջը:

5.5 Հանձնաժողովը պարտավոր է ապահովել հավակնորդների գնահատմանն առնչվող ներքին քննարկումների, փորձագետների ներկայացրած կարծիքների և նմանատիպ այլ գործընթացների գաղտնիությունը:

5.6 Մրցույթի արդյունքներն, ինչպես նաև Հանձնաժողովի կայացրած ընթացիկ այլ որոշումները նախապես հրապարակման և բողոքարկման ենթակա չեն:

5.7 Մրցույթի արդյունքները հաստատվում են և հրապարակվում ռեկտորի համապատասխան հրամանով: Մրցանակակիրների վերաբերյալ Հանձնաժողովի կայացրած որոշումներն ենթակա չեն հրապարակման մինչև սույն հրամանի արձակումը:

5.8 Հանձնաժողովին իրավունք է վերապահվում առանձին դեպքերում չշնորհել նախատեսված մրցանակները:

6. ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Հաղթողների մրցանակաբաշխության արարողությունն իրականացվում է հանդիսավոր պայմաններում՝ որպես կանոն, ՀԱՊՀ Գիտական խորհրդի սեպտեմբերյան նիստում՝ ապահովելով պատշաճ ներքին և արտաքին լուսաբանում:

6.2 Մրցույթի հաղթողների համար սահմանվում են մեկական (ըստ Կետ 2.8-ի մասնագիտական երկու հավաքական ենթաոլորտների) առաջին, երկրորդ և երրորդ մրցանակներ՝ համապատասխան դրամական պարգևատրումներով (Կետ 6.4):

6.3 Մրցանակակիրներին հանձնվում են սույն Կարգով սահմանված դրամական պարգևները և համապատասխան ձևավորմամբ կազմված հավաստագրեր:

6.4 Մրցանակակիրների պարգևատրման համար սահմանվում են դրամական պարգևների հետևյալ բազիսային չափաբաժինները.

- առաջին մրցանակ (ըստ 2 ենթաոլորտների)՝ 100 հազար դրամ,
- երկրորդ մրցանակ (ըստ 2 ենթաոլորտների)՝ 75 հազար դրամ,
- երրորդ մրցանակ (ըստ 2 ենթաոլորտների)՝ 50 հազար դրամ:

Սույն դրամաչափերը, կախված ուսումնական տարվա ընթացիկ իրավիճակից, կարող են դինամիկ փոփոխվել (բարձրացվել)՝ ՀԱՊՀ ռեկտորատի որոշմամբ:

6.5 Մրցանակաբաշխությունից հետո երկու ամսվա ընթացքում կազմակերպվում է մրցանակակրի կողմից առաջարկված դասընթացի/մոդուլի տեսաձայնագրում և այն տեղադրվում է Համալսարանի առցանց կրթական հարթակում՝ համընդհանուր հասանելիության ապահովմամբ:

7. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն Կարգը հաստատվում, փոփոխվում և/կամ լրացվում է Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ:

7.2 Հաստատված Կարգով կանոնակարգված ՀԱՊՀ «Դասավանդման արդի տեխնոլոգիաներ կիրառող լավագույն դասախոս» անվանակարգով ամենամյա մրցույթը

յուրաքանչյուր տարի հայտարարվում է Համալսարանի ռեկտորի համապատասխան հրամանով:

- 7.3 Կարգի հետագա լրացումների և/կամ փոփոխությունների վերաբերյալ առաջարկներն ընդունվում են Համալսարանի ուսումնական ստորաբաժանումներից՝ ՀԱՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին հասցեագրված գրավոր հայտի տեսքով՝ ընթացիկ մրցույթի արդյունքների պաշտոնական հայտարարումից (տես Կետ 5.6) հետո, ոչ ուշ քան մեկ ամսվա ընթացքում:
- 7.4 Կարգի լրացումների և/կամ փոփոխությունների վերաբերյալ տեղերում ձևավորված առաջարկները, նախքան Գիտական խորհրդին ներկայացվելը, քննարկվում և վերջնաձևավորվում են Համալսարանի ռեկտորատի նիստում:
- 7.5 Սույն Կարգը մշակվել է Եվրամիության Erasmus+ ծրագրի շրջանակներում իրականացվող «PRINTeL» նախագծի ՀԱՊՀ աշխատանքային խմբի կողմից՝ հաշվի առնելով առկա միջազգային փորձը և այն համադրելով ՀԱՊՀ ներկայիս իրողություններին ու հնարավորություններին: Կարգը ենթակա է պարբերական մոնիթորինգների և հետագա զարգացումների: